# Հիմա ո՞վ

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ, պատասխանելով մեր հարցին, հայտարարեց, թե վարչապետն իր ելույթում խիստ է արտահայտվել: Խոսքը Տիգրան Սարգսյանի՝ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովի ժամանակ օրերս արած այն հայտարարության մասին է, թե Ակադեմիան այսուհետ ոչ թե խնդիրներ պետք է առաջադրի, այլ ներկայացնի դրանց լուծումները: «Մենք պետք է համեմատենք, այդպես ուղղակի խոսելով (նրա մասին չէ, ընդհանրապես) հարց չի լուծվում: Պետք է ինչ-որ մի բան վերցնենք, ասենք՝ այ, եկեք սրա հետ համեմատենք, եւ դրանից հետո խնդիրները ձեւակերպենք»,- ասաց ԳԱԱ նախագահը: Ինքն, օրինակ, համեմատել է Եվրամիության ստեղծած գիտական կենտրոնի գիտնականների արտադրանքն ու ստացած գումարը մեր գիտնականների արտադրանքի ու ստացած գումարի հետ: Գրեթե ՀՀ ԳԱԱ-ի չափ ինստիտուտներ ունեցող այս կենտրոնում, ըստ Մարտիրոսյանի, ստացված արտադրանքը՝ Հայաստանի համեմատությամբ, ընդամենը երկու անգամ է ավել, մինչդեռ ֆինանսավորումը մերից գերազանցում է 100 անգամ: «Հիմա խնդիրը ո՞վ պիտի դնի՝ մե՞նք, թե՞ պարոն վարչապետը»,- հարցրեց Ռադիկ Մարտիրոսյանը: